ՏԵՂԵԿԱՆՔ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 11. Բանկի պատասխանատվությունը

~~1. Բանկի կողմից սույն օրենքի և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջները խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տուգանք՝~~

~~1) հարյուր հազար դրամի չափով, եթե խախտմանը նախորդող 365 օրվա ընթացքում բանկը նշված պահանջների խախտում թույլ չի տվել.~~

~~2) երկու հարյուր հազար դրամի չափով, եթե խախտմանը նախորդող 365 օրվա ընթացքում բանկը թույլ է տվել նշված պահանջների մեկ խախտում.~~

~~3) հինգ հարյուր հազար դրամի չափով, եթե խախտմանը նախորդող 365 օրվա ընթացքում բանկը թույլ է տվել նշված պահանջների երկու և ավելի խախտում:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում Կենտրոնական բանկն իրավունք ունի բանկի նկատմամբ տուգանք նշանակելու խախտմանը նախորդող 365 օրվա ընթացքում բանկի նկատմամբ սույն հոդվածով սահմանված կարգով նշանակված ամենամեծ տուգանքի չափով, եթե անգամ այդ տուգանքի չափը գերազանցում է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված տուգանքների առավելագույն չափը:~~

~~3. Տուգանքը գանձվում է Կենտրոնական բանկի հայցով՝ դատարանի վճռով այն դեպքում, երբ բանկը համաձայն չէ տուգանքի նշանակման կամ տուգանքի չափի հետ: Տուգանքը գանձվում է՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների:~~

~~4. Սույն օրենքի կիրառման նպատակով սույն օրենքի և դրա հիման վրա ընդունված այլ ակտերի յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում յուրաքանչյուր խախտում համարվում է առանձին խախտում:~~

~~Սույն հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցները Կենտրոնական բանկը կիրառում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:~~

1. Բանկի կողմից սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները 365 օրվա ընթացքում՝

1) մեկ անգամ խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամի չափով.

2) երկու անգամ խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տուգանք՝ մեկ միլիոն դրամի չափով.

3) երեք և ավելի անգամ խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տուգանք՝ երկու միլիոն դրամի չափով:

2. Տուգանքը գանձվում է Կենտրոնական բանկի հայցով՝ դատարանի վճռով այն դեպքում, երբ բանկը համաձայն չէ տուգանքի նշանակման կամ տուգանքի չափի հետ: Տուգանքը գանձվում է՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների:

3. Սույն օրենքի կիրառման նպատակով սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված այլ ակտերի յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում յուրաքանչյուր խախտում համարվում է առանձին խախտում:

Սույն հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցները Կենտրոնական բանկը կիրառում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: